«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-121/21-01/213

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԲԲ) 01/213 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«30» 07 2021թ.
«____» _____ 20__ թ

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից,և

«ԱԲԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գրիգոր Քեշիշյանի, որը գործում է «ԱԲԻ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված **հանդերձանքը** (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրացուցային օրից** ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 օրացուցային օրից** ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Սույն պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքի՝ հաշվապահական ձևակերպման համար հիմք ընդունել պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան դրական եզրակացության հիման վրա Գնորդի կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **9411600 (ինը միլիոն չարս հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ-1568600** ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Գնորդի կողմից

ստորագրված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) 30 օրացուցային օրվա ընթացքում (ներառյալ վաղաժամկետ մատակարարման դեպքերը):

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին

ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ «ՀԱԷԿ» ՓԲԸ	ՎԱՃԱՌՈՂ «ԱԲԻ» ՍՊԸ
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ, Հ/Հ 1930000199200100 «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան, ՀՎՀՀ 04401874, **Հեռ./ֆաքս՝** 28-18-80, 28-06-69, **Հեռ.՝** 20-04-91, 33-40 **E-mail**: anpp@anpp.am	ԻՆԴԵՔՍ, 047 ք. Երևան, Նորք 11փ. 15տ. Հ/Հ 163008129278 Հայէկոնոմբանկ ԲԲԸ, ՀՎՀՀ 01526588, **Հեռ.՝** 099205282, **E-mail**: g.keshishyan@mail.ru
..... **Է. Մարտիրոսյան** Կ.Տ.	..... **Գ. Քեշիշյան** Կ.Տ.

Հավելված N 1
«30» 07 2021թ. կնքված
№ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-121/21-01/213 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի											
								մատակարարման			
ջ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը
2	18211500	Բաճկոն	Բանվորական, ձմեռային, 50÷55% բամբակ, 45÷50% պոլիէսթեր, խտությունը 200÷250 գրամ/մ², ջրադիմացկուն, ձևվածքը՝ ուղիղ, միալանջ ծալովի օձիքով, օձիքի ներքին կարի վրա կտորե կախիչ և պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով, առջևից կոճկվում է միմյանցից 17 սմ հեռավորության վրա տեղադրված 4 կոճակներով, գործվածքը կապույտ գույնի, բաճկոնի տաքացնող ներդիրը սինտիպոնե, աստառը ընտրված լինի բաճկոնի գույնին համապատասխան, թևքերը՝ երկարաթև, կողային վրադիր գրպաններով, գրպանի չափսերն են՝ 17x17 սմ, բոլոր կարերը օվերլոկված, երկկար: Չափսը / Քանակը / Չափման միավորը 46 / 14 / հատ 48 / 60 / հատ 50 / 108 / հատ 52 / 118 / հատ 54 / 112 / հատ 56 / 47 / հատ 58 / 21 / հատ 60 / 20 / հատ 62 / 5 / հատ 68 / 7 / հատ	հատ	6600	**3379200**	512	Գ. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ	512	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից 40 /քառասուն/ օրացուցային ընթացքում
4	18421170	Գոտի	Կաշվե, 50մմ լայնությամբ, մետաղյա ճարմանդով, գոտու երկարությունը 120÷150սմ:	հատ	3390	**189840**	56		56	
8	18111300	Կոստյում ամառային	Բաղկացած է բաճկոնից և տաբատից, 50±2% բամբակ, 50±2% պոլիէսթեր, խտությունը 224±2 գրամ/մ² (կտորը ripstop տեսակի), մուգ թանաքագույն (կապույտ), ռեզինե գոտիով, ծալովի օձիքով: Կոճկվում է շղթայով, որը երեսապատված է կտորով: Ներքևի մասում երկկողմանի ներկարված թեք գրպաններ են, առանց կափույրի, շղթայով, առջևի մասում՝ ձախ կողմում, ասեղնագործվում է ՀԱԷԿ հապավումը, տառերի բարձրությունը՝ 20մմ, լայնությունը՝ 10մմ: Տաբատը՝ ազատթող փողքերով 2 կողային ներկարված	լրակազմ	13980	**1118400**	80		80	

<table>
<tr>
<td></td>
<td></td>
<td></td>
<td>գրպանով, հետևի մասում 2 գրպան կափույրով: Առաջամասը կոճկվում է շղթայով:
<table>
<tr><th>Չափսը</th><th>Քանակը</th><th>Չափման միավորը</th></tr>
<tr><td>44</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>46</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>48</td><td>10</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>50</td><td>11</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>52</td><td>11</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>54</td><td>11</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>56</td><td>11</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>58</td><td>8</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>60</td><td>5</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>62</td><td>5</td><td>Լրակազմ</td></tr>
</table></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
<td></td>
</tr>
<tr>
<td>9</td>
<td>18111300</td>
<td>Կոստյում ամառային</td>
<td>Բաղկացած է բաճկոնից և տաբատից, 50±5% բամբակ, 50±5% պոլիէսթեր, խտությունը 224±10 գրամ/մ² (կտորը ripstop տեսակի), գույնը՝ մուգ մոխրագույն, ռեզինե գոտիով, ծալովի օձիքով: Կոճկվում է շղթայով, որը երեսապատված է կտորով: Ներքևի մասում երկկողմանի ներկարված թեք գրպաններ են, առանց կափույրի, շղթայով, համազգեստի մեջքի հատվածում ասեղնագործվում է SECURITY բառը դեղին գույնով, տառերի բարձրությունը՝ 35 մմ, լայնությունը՝ 25 մմ, բառի ընդհանուր երկարությունը՝ 250մմ: Տաբատը՝ ազատթող փողքերով 2 կողային ներկարված գրպանով, հետևի մասում 2 գրպան կափույրով: Տաբատը կոճկվի շղթայով և վերևի մասում մեկ կոճակով:
<table>
<tr><th>Չափսը</th><th>Քանակը</th><th>Չափման միավոր</th></tr>
<tr><td>48</td><td>11</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>50</td><td>10</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>52</td><td>10</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>54</td><td>14</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>56</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>58</td><td>4</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>60</td><td>2</td><td>Լրակազմ</td></tr>
<tr><td>62</td><td>1</td><td>Լրակազմ</td></tr>
</table></td>
<td>լրակազմ</td>
<td>13980</td>
<td>782880</td>
<td>56</td>
<td></td>
<td>56</td>
<td></td>
</tr>
<tr>
<td>10</td>
<td>18111300</td>
<td>Կոստյում ձմեռային</td>
<td>Մուգ թանաքագույն (կապույտ): Բաղկացած բաճկոնից և տաբատից: 50±2% բամբակ, 50±2% պոլիէսթեր, խտությունը 224±2 գրամ/մ² (կտորը ripstop տեսակի):
ՁՄԵՌԱՅԻՆ ԲԱՃԿՈՆԸ՝ բաճկոնի տաքացնող ներդիրը սինտիպոնե, աստառը ընտրված լինի բաճկոնի գույնին համապատասխան, փակվող երկկողմանի երիզաշղթայով, կոճկվող ռեզինե գոտիով: Ձեռքերին ռեզինե մանժետներ 5,5սմ: Օձիքը՝ արհեստական մորթուց, լայն ամրակներով: Բաճկոնը երկու կողային գրպանով: Համազգեստի առջևի մասում ձախ կողմում ասեղնագործվում է ՀԱԷԿ հապավումը, տառերի բարձրությունը՝ 20մմ, լայնությունը՝ 10մմ, ՁՄԵՌԱՅԻՆ ՏԱԲԱՏ՝ 2 ներկարված կողային</td>
<td>լրակազմ</td>
<td>18720</td>
<td>1497600</td>
<td>80</td>
<td></td>
<td>80</td>
<td></td>
</tr>
</table>

			գրպաններով: Հետևի մասում կարված է 2 կափույրով գրպան, որոնք ամրացվում են կոճակով: Առաջամասը կոճկվում է շղթայով: Չափսը | Քանակը | Չափման միավորը 44 | 4 | Լրակազմ 46 | 4 | Լրակազմ 48 | 10 | Լրակազմ 50 | 11 | Լրակազմ 52 | 11 | Լրակազմ 54 | 11 | Լրակազմ 56 | 11 | Լրակազմ 58 | 8 | Լրակազմ 60 | 5 | Լրակազմ 62 | 5 | Լրակազմ							
17	18111300	Կոստյում	տղամարդու, բանվորական արտադրական փոշուց (աղտոտումից) և մեխանիկական ազդեցությունից պաշտպանելու համար (костюм для защиты от общих производственных загрязнений): Պաշտպանիչ հատկությունը Զ, Մի (зашитные свойства З, Ми): Կոստյումը պատրաստված է երեք գույնի գործվածքներից՝ հիմնականը-կապույտ, դրվագները-կապույտ և կոկետկան (կցվածքը)- մոխրագույն: Բաճկոնը կենտրոնական կայծակ ճարմանդով, որը վերևից փակվում է կպչուն ժապավենի փականով, վրադիր գրպաններով, ներքևի գրպանները՝ մեծածավալ (объемные): Թևքերը արմունկային կարերով, արմնկադիրներով (налокотниками), կոճակների վրայի թեզանիքներով, որոնք բացառում են գործվածքի ընկնելը մեխանիզմի մեջ: Թևատակերի փոսիկներում՝ օդափոխության անցքեր: Բաճկոնի ներքևի մասը գոտու վրա կարգավորվում են ըստ ծավալի պատերով (патами): Տաբատը գոտիով և պատերով՝ ծավալը կարգավորելու համար, կողային և հետևի կեսերի վրայի գրպաններով, ուժեղացված ծնկամասերով (наколенниками): Դրվագումները՝ կարերը, օղակները, ավտոմատ ամրակները հագուստի վրա կատարված լինեն կապույտ գույնի (հիմնական գործվածքի գույնով): Գործվածքը՝ խառը – ВО ի հետ, հումքի բաղադրությունը 60÷70% բամբակ, 30÷40% պոլիէսթեր, խտությունը ոչ պակաս 240գ/մ²: Ազդանշանային տարրերը-շերտեր լույս անդրադարձնող նյութից 50մմ լայնության: «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի լոգոտիպը 80x50մմ չափերով բաճկոնի վերևի ձախ գրպանի վրա (նկար 1), գունային համադրումը համաձայն նախանմուշի (մակետ): Լոգոտիպը պետք է լինի ցայտուն, կայուն խոնավության և մեխանիկական ազդեցությունների: ՀԱՍԱԿԸ | Չափսը | Քանակը | Չափման 158;164 | 88;92 | 20 | Լրակազմ 158;164 | 100;104 | 4 | Լրակազմ 158;164 | 108;112 | 48 | Լրակազմ 158;164 | 112;116 | 44 | Լրակազմ 170;176 | 88;92 | 4 | Լրակազմ	լրակազմ	9180	**1395360**	152		152	

			170;176 / 96;100 / 30 / Լրակազմ 182;188 / 100;104 / 2 / Լրակազմ									
18	18111300	Կոստյում ձմեռային	Բաղկացած բաճկոնից և տաբատից: Գույնը մուգ մոխրագույն, 50±5% բամբակ, 50±5% պոլիէսթեր, խտությունը 224±5/մ² (կտորը ripstop տեսակի): **Ձմեռային բաճկոնը** կարճ ձմեռային տաք ներդիրով, փակվող երկկողմանի երիզաշղթայով, կոճկվող ռեզինե գոտիով: Ձեռքերին ռեզինե լայն մանժետներ: Օձիքը՝ արհեստական մորթուց, լայն ամրակներով ամրացված հանվող գլխարկով, 2 կողային գրպաններով: Մեջքի մասում դեղին գույնի տառերով, ասեղնագործվում է **SECURITY** բառը: Տառերի բարձրությունը 35մմ, լայնությունը 25մմ,բառի ընդհանուր երկարությունը 250մմ: **ՁՄԵՌԱՅԻՆ ՏԱԲԱՏ:** 2 ներկարված կողային գրպաններով, ծնկների վերևի մասում կափույրով 2 կոճակով ամրացվող գրպանով: Հետևի մասում կարված է 2 կափույրով գրպան, որոնք ամրացվում են կոճակով: Չափսը / Քանակը / Չափման միավորը 48 / 10 / Լրակազմ 50 / 10 / Լրակազմ 52 / 10 / Լրակազմ 54 / 12 / Լրակազմ 56 / 6 / Լրակազմ 58 / 4 / Լրակազմ 60 / 2 / Լրակազմ 62 / 2 / Լրակազմ	Լրակազմ	18720	**1048320**	56		56	

Լրացուցիչ պայմաններ՝

- *Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, փաթեթավորումը գործարանային, կտորները լվանալուց չպետք է գունաթափվեն և փոքրանան: Ապրանքների նմուշները պետք է համաձայնեցվեն պատվիրատուի հետ:*
- *Մատակարարման ժամանակ մատակարարված ապրանքներից գնորդի ներկայացուցիչը, վաճառողի ներկայությամբ, կկատարի նմուշառում, որոնք վաճառողի միջոցներով պետք է անցնեն փորձաքննություն անկախ փորձագետի կողմից, և փորձաքննության եզրակացությունը մատակարարը պետք է ներկայացնի պատվիրատու կողմին:*
- *Ապրանքները պետք է ունենան որակի հավաստագիր կամ անձնագիր:*

ԳՆՈՐԴ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Է. Մարտիրոսյան
Կ.S.

ՎԱՃԱՌՈՂ
«ԱԲԻ» ՍՊԸ

Գ. Քեշիշյան
Կ.S.

«30» 07 Հավելված N 2
2021թ. կնքված
№ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-121/21-01/213 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի														
ֆ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	18211500	Բաճկոն								**3379200**	3379200	3379200	3379200	3379200	**3379200**
4	18421170	Գոտի								**189840**	189840	189840	189840	189840	**189840**
8	18111300	Կոստյում ամառային								**1118400**	1118400	1118400	1118400	1118400	**1118400**
9	18111300	Կոստյում ամառային								**782880**	782880	782880	782880	782880	**782880**
10	18111300	Կոստյում ձմեռային								**1497600**	1497600	1497600	1497600	1497600	**1497600**
17	18111300	Կոստյում								**1395360**	1395360	1395360	1395360	1395360	**1395360**
18	18111300	Կոստյում ձմեռային								**1048320**	1048320	1048320	1048320	1048320	**1048320**
														Ընդամենը՝	**9411600**

Վճարումը կկատարվի փաստացի մատակարարված ապրանքների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, Պատվիրատուի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում վաղաժամկետ մատակարարման դեպքում) 30 օրացուցային օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Է. Մարտիրոսյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«ԱԲԻ» ՍՊԸ

Գ. Քեշիշյան
Կ.Տ.